

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է ցածր 1-2 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հոկտեմբերի 12-ին. Տավուշում գրանցվել է +22...+24^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +18...+20^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +23...+25^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +24...+28^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +19...+21^{0}C, Շիրակում՝ +16...+20^{0}C (Աշոցք՝ +14^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +14...+17^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +18...+20^{0}C, Գեղարքունիքում՝ +16...+21^{0}C, Լոռիում՝ +18...+21^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +23...+25^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +14...+16^{0}C, նախալեռներում՝ +17...+19^{0}C (Աշտարակ՝ +23^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հոկտեմբերի 14-ին, 15-ին. Տավուշում գրանցվել է +4...+6^{0}C (Դիլիջան՝ 0^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0...-2^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +2...+4^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +7...+9^{0}C, նախալեռնային շրջաններում 0...+3^{0}C (Սիսիան՝ -3^{0}C), Շիրակում՝ -2...-7^{0}C (Արթիկ՝ +1^{0}C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -3...+1^{0}C, նախալեռնային շրջաններում՝ 0...+2^{0}C, Գեղարքունիքում՝ 0...-4^{0}C (Սևան՝ 0.9^{0}C, Շորժա՝ +3^{0}C), Լոռիում՝ -1...-5^{0}C (Օձուն՝ +2^{0}C), Արմավիրում, Արարատում՝ +2...+5^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -2...-4^{0}C, նախալեռներում՝ +2...+5^{0}C:



Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 23-30մմ (153-273%), Լոռիում՝ 17-28մմ (142-200%), Տավուշում՝ 4-13մմ (29-100%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 11-12մմ (79-109%), նախալեռներում՝ 7-24մմ (70-267%), Գեղարքունիքում՝ 2-14մմ (17-78%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 11-13մմ (73-81%), նախալեռնային շրջաններում՝ 10մմ (100%), Արմավիրում՝ 8-12մմ (133-200%), Արարատում՝ 2-4մմ (25-80%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 2մմ (13%), նախալեռնային շրջաններում՝ 0.3մմ (4%), Սյունիքում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են 14-ին. լեռնային շրջաններում՝ -1...-6^{0}C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ 0....+3^{0}C, Մեղրի՝ +6^{0}C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



















Մշակաբույսերի աճի և զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի արդյունավետ խոնավության պաշարներն անցյալ տասնօրյակի համեմատ համարյա նույն էին:

Լեռնային շրջաններում հողի 20սմ խորության վրա կազմել են 15-25%, նախալեռնային շրջաններում՝ 20-31%, հովտային շրջաններում՝ 25-38%: Հողի 40սմ խորության շերտում լեռնային շրջաններում կազմել են 15-35%, նախալեռնային շրջաններում՝ 20-35%, հովտային շրջաններում՝ 25-40%:

Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքը:

Լեռնային շրջաններում շարունակվել է կարտոֆիլի, կաղամբի, հնդավորների, նախալեռներում՝ եգիպտացորենի, ճակնդեղի, պտղատուների, հովտային շրջաններում՝ բանջարանոցային մշակաբույսերի և պտղատուների բերքահավաքը ինչպես նաև աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել բերքահավաքի համար: